



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հ Ր Ա Մ Ա Ն

« 07 » սեպտեմբերի 2017 թ.
ք.Գավառ

N 501-Ա

ԱՎԵՏԻՔ ՍԱՄՎԵԼԻ ԽԼՈՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 10-րդ մասով, 15-րդ հոդվածի 3-րդ մասի «դ» կետով և 4-րդ մասով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2002 թվականի հունիսի 13-ի «Քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգը սահմանելու մասին» N 17-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 75-րդ և 76-րդ կետերով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 19-ի N 1797-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի կանոնադրության 23-րդ կետի «ե» ենթակետը ու Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի առաջատար մասնագետի /64-3.2-21/ թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի 2017 թվականի սեպտեմբերի 6-ի N 5 որոշումը, եզրակացությունը ու Ավետիք Խլոյանի դիմումը՝

հրամայում եմ՝

1. Ավետիք Սամվելի Խլոյանին 2017 թվականի սեպտեմբերի 7-ից նշանակել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի առաջատար մասնագետի /64-3.2-21/ պաշտոնում՝ մեկ ամիս փորձաշրջանով:

Աշխատավարձը և վարձատրության հետ կապված այլ հարաբերություններ սահմանվում են «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներով:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում 2017 թվականի սեպտեմբերի 7-ից:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ



(Handwritten signature)

ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ